ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



Ս. ԹԱԴԵՈՍ ԵՎ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց մի պատվիրակություն Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Երկրորդի կողմից՝ նախագահությամբ Արևելյան Եկեղեցիների Ս. Ժողովի նախագահ Կարդինալ Սիլվեստրինիի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնելու Հայաստան աշխարհի առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների մասունքները:

Հռոմից ժամանած պատվիրակության մաս էին կազմում Անդրկովկասում Պապական նվիրակ եպիսկոպոս Ժան-Պոլ Գոբելը, գերապայծառներ Վարդան Պողոսյանը (Բրազիլիա), Սթերնը (ԱՄՆ), Ներսես արքեպս. Ներսիսյանը (Հայ կաթոլիկների առաջնորդ), Հայր Կուջերոտին և այլ անձինք:

Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի կողքին էին Տ. Հուսիկ, Տ. Ներսես, Տ. Ոսկան, Տ. Գրիգորիս, Տ. Գարեգին, Տ. Անանիա, Տ. Ասողիկ Սրբազաններն ու Մայր Աթոռի միաբաններն ու քահանա հայրերը:

Պատվիրակությունը թափորով առաջնորդվեց Մայր տաճար: Մայր տաճարում կրոնական արարողությունից հետո, հանուն Հռոմի Սրբազան Քահանայապետի, ելույթով հանդես եկավ Կարդինալ Սիլվեստրինին.

«Մեծ պատիվ ունեմ Ձեզ բերելու նվերը Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ-ի: Այս նվերով Սրբազան Քահանայապետը ուզում է արտահայտել իր մեծ սերը, հարգանքը և գնահատանքը Հայ Առաքելական Եկեղեցվո հանդեպ: Առնելով Ս. Աթոռի նշխարների գանձարանից Ս. Բարդուղիմեոս և Ս. Թադեոս առաքյալների մասունքները, մենք հանձնում ենք Ձեզ: Այս երկու առաքյալներին Հայ Առաքելական Եկեղեցին նայում է մեծ ուրախությամբ և վստահությամբ, որովհետև նրանք են, որ հիմնեցին Հայ Եկեղեցին:

Սրբազան Քահանայապետը այս նվերով ցանկանում է արտահայտել այն մեծ հարգանքը, որ ունի Հայ Առաքելական Եկեղեցու, մանավանդ Հայ

Առաքելական Եկեղեցու հիմնարկության հանդեպ: Իր այս նվերով Հռոմեական Եկեղեցին արտահայտում է իր սերը եւ հարգանքը, որ հիմնված է Ս. Պողոս և Ս. Պետրոս Առաքյալների քարոզչությամբ հանդեպ Հայ Առաքելական Եկեղեցին, որ հիմնված է Ս. Բարդուղիմեոս և Ս. Թադեոս Առաքյալների քարոզչությամբ: Առաքյալները, երբ իրենց քարոզչությունն էին անում, անշուշտ ունեին եղբայրասիրություն իրար հանդեպ և ուզում էին նաև, որ այդ Եկեղեցիները, որ իրենք էին հիմնել, ունենային այդ նույն եղբայրասիրությունը իրար հանդեպ: Դրա համար, երբ ասում ենք քույր Եկեղեցիներ, ուզում ենք հասկանալ և ասել միևնույն Եկեղեցիները, որոնք հիմնվել են Քրիստոսի միևնույն առաքյալներից: Եվ երկուսիս միևնույն առաքելական այս հիմքը ուժեղացնում է մեր կապերը, և մեզ միացնում է Քրիստոսին, որ մեզ համար չարչարվեց, մեռավ և հարություն առավ: Այս Առաքելական հիմքը, որ մենք ունենք, մեզ ավելի է միացնում Քրիստոսի Ս. Ավետարանին: Դրա համար Սրբազան Քահանայապետը իր այս նվերով ուզեց արտահայտել կապը քույր Եկեղեցիների միջև, որոնք միևնույն նպատակն ունեն: Սրբազան Քահանայապետը՝ Հովհաննես-Պողոս Բ-ը, ինձնից խնդրեց, որ Ձեզ հաղորդեմ իր եղբայրական ողջույնը և սերը: Նա ամեն օր իր աղոթքներում հիշում է Ձերդ Սրբությանը, Հայ Եկեղեցին և աշխարհի բոլոր Եկեղեցիները: Նա աղոթում է ամեն օր, որպեսզի այդ եղբայրությունը և սերտ կապերը, որ մենք ունենք իրար հանդեպ, որեցօր ավելի զորանա, և կարողանանք մի օր իրականացնել Հիսուս Քրիստոսի աղոթքը միության նկատմամբ: Եվ աղոթում է նաև, որ քույր Եկեղեցիները իրար հետ աշխատակցելով կարողանան հասցնել ամբողջ աշխարհին Հիսուս Քրիստոսի Ավետարանը, նաև այն մարդկանց, ովքեր դեռևս չեն լսել Հիսուս Քրիստոսի մասին:

Սրբազան Քահանայապետը աղոթում է նաև հայ ազգի համար, որ շատ-շատ չարչարվեց իր պատմության ընթացքին: Եվ աղոթում է նաև, որ հայ ազգը ապրի խաղաղ, որի համար այդքան պայքարեց:

Թող Աստված Ձերդ Սրբությանը շնորհի երկար կյանք, առողջություն, որպեսզի շարունակեք Ձեր առաքելությունը: Եվ թող Աստված շնորհք տա մեզ, որ երկու քույր Եկեղեցիները իրար հետ ավելի սերտ կապերով և ավելի մոտ կերպով աշխատեն տարածել Աստուծո խոսքը: Եվ թող երկու Առաքյալները՝ Թադեոսն ու Բարդուղիմեոսը, օգնեն մեզ, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առաքելությունները: Թող Աստուծո կամքը լինի»:

Հավարտ իր խոսքի Կարդինալ Սիլվեստրինին Վեհափառ Հայրապետին հանձնեց առաքյալների մասունքները, ինչպես նաև մասունքները հաստատող վկայագրերը:

Պատասխան խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր կյանքի ամենապատմական օրերից մեկն է ապրում այսօր: Իսկապես պատմական է այս պահը, երբ հեռու Հռոմից Սրբազան Պապը ուղարկում է մի պատվիրակություն իր գլուխ ունենալով Կարդինալ Սիլվեստրինիին, և ուրիշ հոգևորականներ՝ բերելու համար մեզ բոլորիս Սրբազան Պապի օրհնությունն ու ամենաբարի մաղթանքները, որի մասին մենք հուզումով լսեցինք Կարդինալ Սիլվեստրինիի խոսքերից: Մենք իրապես զգացված և շնորհակալ ենք այս բարի, եղբայրական և քր-

ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

ՈՂՋԱԳՈՒՐՄԱՆ ՊԱՀ

OFFICIUM
DE LITURGICIS CELEBRATIONIBUS SUMMI PONTIFICIS

SACRARIUM APOSTOLICUM

Universis has litteras inspecturis fidem facimus Nos ex authenticis Reliquiis quae apud Sacrarium Apostolicum servantur extrassisse particulas ex ossibus

Sancti BARTHOLOMAEI, Apostoli

easque in theca, crystallo munita, filo serico rubri coloris et sigillo nostro obsignata collocasse.
In quorum fidem has litteras a Nobis suscriptas et sigillo nostro munitas dedimus.

Ex Aedibus Vaticanis, 13 aprilis 1994

Petrus Marini
PETRUS MARINI
CELEBRATIONUM LITURGICARUM PONTIFICALIUM MAGISTER

OFFICIUM
DE LITURGICIS CELEBRATIONIBUS SUMMI PONTIFICIS

SACRARIUM APOSTOLICUM

Universis has litteras inspecturis fidem facimus Nos ex authenticis Reliquiis quae apud Sacrarium Apostolicum servantur extrassisse particulas ex ossibus

Sancti IUDAE THADDAEI, Apostoli

easque in theca, crystallo munita, filo serico rubri coloris et sigillo nostro obsignata collocasse.
In quorum fidem has litteras a Nobis suscriptas et sigillo nostro munitas dedimus.

Ex Aedibus Vaticanis, 13 aprilis 1994

Petrus Marini
PETRUS MARINI
CELEBRATIONUM LITURGICARUM PONTIFICALIUM MAGISTER

ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԳՐԵՐ

ֆիստոնեական իսկական զգացմունքների համար հանդեպ մեր փոքր և տառապյալ Եկեղեցին:

Թույլ տվեք իմ զգացումը արտահայտել նաև այս պահին: Երկրորդ անգամ լինելով իմ կյանքում նման պատմական պահ եմ ապրում, երբ դեմհանդիման եմ գտնվում պատմական մեծ կենտրոն քրիստոնեական Հռոմին և նրա Քահանայապետին, ինչպես այդ տեղի ունեցավ իմ առաջին այցելության առիթով Հռոմ՝ Պողոս Զ Պապի օրերին: Անմոռանալի պահեր ապրեցինք մենք այն ատեն Հռոմում՝ Սուրբ Պետրոս տաճարում և Սիքստինյան մատուռում միատեղ աղոթքներով և միատեղ մեր զգացմունքների փոխանակումով: Եվ ահա փառք եմ տալիս Աստուծո Ամենակալին, որ ես կրկին ապրում եմ այդ զգացմունքները, այս անգամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Պապական նվիրակի և Կարդինալ Սիլվեստրինիի ներկայությամբ: Ես կարծում եմ, չեմ սխալվի, եթե ասեմ, որ այս այցելությունը և մեր հանդիպումը և բարի ողջույնները Սրբազան Պապի ոչ միայն սովորական իմաստով քրիստոնեական եղբայրության զգացումներ են, այլ նաև իսկական հաղորդակցություն քրիստոնեական իսկական իմաստով մեր միջև և մեր Եկեղեցիների միջև:

Մեր այս հանդիպումը առավել պատմական նշանակություն է ստանում այն նվերներով, որ ներկայացրեց Կարդինալ Սիլվեստրինին Հռոմի Սրբազան Պապի անունով՝ Սուրբ Թադեոսի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները զգուշությամբ և ապահով պահված Հռոմում, և այսօր նրանք գալիս են իրենց հայրենիքում մի տեսակ հանգչելու այն հողի վրա, որտեղ իրենք դարեր առաջ Քրիստոսի Լույսը սկսեցին առաջին անգամ տարածել Հայոց աշխարհի մեջ: Այս առիթով ես զգում եմ և վկայություն եմ բերում իմ, որ այս հիշատակները, ինչպիսին են Սուրբ Թադեոսի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները, որոնք բերվեցին այստեղ, մեզ միացնում են իսկապես իբրև Քրիստոսի ծառայող և Քրիստոսի փառաբանող ժողովուրդներ:

Երբեմն պատահում է, որ մենք մեր առօրյա գործերի մեջ մխրճված մոռանում ենք որոշ ճշմարտություններ: Մոռանում ենք, որ նույն անդամներն ենք:

Ձերդ Գերազանցություն Կարդինալ Սիլվեստրինի, ընդունեցեք մեր խորին շնորհակալությունն այս թանկագին հիշատակների համար՝ մասունքները մեր երկու Առաքյալների, որոնք դուք հանձնեցիք Նորին Սուրբ Օծություն Սրբազան Պապի անունով: Ձեր խոսքի մեջ, Ձերդ Գերազանցություն, հիշեցիք, որ Սրբազան Պապը հաճախ իր աղոթքներում հիշում է նաև մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը:

Իսկապես մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը, մանավանդ այս օրերին, կարիք ունի Սրբազան Պապի աղոթքներին: Մեր ժողովուրդը իր պատմության ամենածանր շրջաններից մեկն է ապրում: Գրեթե ամեն օր, ամեն ժամ նահատակվում են հայ հերոսամարտիկները հանուն ազատության, արդարության և հանուն Քրիստոսի: Ահա թե ինչու իսկապես մեզ համար խորապես մխիթարական է, որ Սրբազան Պապը չի մոռանում նաև մեզ. իր աղոթքներում ո՛չ միայն հիշում, այլ նաև մաղթում է, որ հայ ժողովրդի Ղարաբաղյան արդար դատը հաջողությամբ ի կատար ածվի, և հայ ժողովուրդը գտնի իր բնականոն և խաղաղ կյանքը:

Մաղթում եմ Ձեզ բարի ճանապարհ: Վստահ եմ, որ Դուք ևս տպավորվեցիք այս հանդիպումով և Դուք ևս չպիտի մոռանաք մեզ, ինչպես նաև մենք՝ Ձեզ:

Եվ տարեք Ձեզ հետ Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից»:

Հավարտ արարողության Վեհարանի ընդունելությունների դահլիճում տեղի ունեցավ ջերմ ընդունելություն: